Նոյեմբերյան համայնքի ղեկավար

Արսեն Աղաբաբյանին

Հարգելի պարոն Աղաբաբյան,

«Ապրելու» հիմնադրամը, կարևորելով Նոյեմբերյան համայնքի զարգացումը, պատրաստակամ է մասնակցել համայնքի զարգացման ծրագրերին: Մասնավորապես, հիմնադրամը առաջարկում է որպես իր կողմից նվիրատվություն իրականացնել Նոյեմբերյան համայնքի այգու վերակառուցում:

Նախատեսվում է այգին բարեկարգել, կանաչապատել, կառուցել միջոցառումների, հանդիսությունների հատված, որը համայնքին հնարավորություն կտա անցկացնել բարձր մակարդակի միջոցառումներ: Այգում կտեղադրվեն բարձրակարգ նստարաններ, աղբամաններ, կանցկացվի նոր լուսավորություն:

Այգու վերակառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2022թ. մայիս ամսին և ավարտել մինչև տարեվերջ:

Այգու վերակառուցման ճարտարապետական, դիզայներական նախագծերը և աշխատանքների բոլոր փուլերը կհամաձայնեցվեն համայնքի հետ:

Որպես համայնքի կողմից պարտավորություն՝ ակնկալում ենք հետևյալը՝

- Այգու վերակառուցումից հետո իրականացնել այգու պատշաճ սպասարկում՝ կանաչապատ տարածքների խնամք, լուսավորության ապահովում, մաքրություն,
- Այգու տարածքի ամբողջական կամ մասնակի օտարման և/կամ վարձակալության տրամադրման բացառում առնվազն 50 տարի ժամկետով,
- Ներկայումս այգում առկա շինությունների քանդման ուղղության աշխատանքների իրականացում:

Խնդրում եմ համայնքի համաձայնությունը՝ վերոնշյալի իրականացման համար:

Հարգանքով՝

«Ապրելու» հիմնադրամի տնօրեն՝ Մ. Առաքելյան